
ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՁԵՎԱՉԱՓՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


2025-26 ուս.տարի, 1-ին կուրս, 1-ին կիսամյակ

Հարցմանը մասնակցել են «Ստոմատոլոգիա» հայալեզու կրթական ծրագրի 1-ին կուրսի 91 ուսանող (45%)

1.Նշեք ձեր առաջադիմությունը




2. 1-5 բալային սանդղակով գնահատեք մոդուլային կրթության արդյունավետությունը




Մոդուլային համակարգի արդյունավետությունը գնահատվում է միջին կամ միջինից բարձր, սակայն առկա է բարելավման անհրաժեշտություն


3. ա) Ստորև նշված մոդուլներն ուսումնասիրելու ընթացքում հստակ պատկերացրել եք դրանց կառուցվածքը (տարբեր առարկաների մասնաբաժինները)



բ) Ստորև նշված մոդուլներն ուսումնասիրելու ընթացքում հստակ պատկերացրել եք դրանց գնահատման մեթոդաբանությունը




գ) Ստորև նշված մոդուլներն ուսումնասիրելու ընթացքում հստակ պատկերացրել եք դրանց ակնկալվող վերջնարդյունքները (թե ինչ պետք է իմանաք և կարողանաք մոդուլն ավարտելուց հետո)




Ուսանողները մասամբ պատկերացնում են մոդուլների կառուցվածքը, գնահատման մեթոդաբանությունը և ակնկալվող վերջնարդյունքները, սակայն լիարժեք հստակություն չկա, հատկապես բժշկական քիմիայի դեպքում

4. 1-5 բալային սանդղակով գնահատեք, թե ստորև նշված մոդուլներում տարբեր ամբիոնների կողմից դասավանդվող նյութերը որքանով էին փոխկապակցված և փոխհամաձայնեցված (1՝ բացարձակ փոխհամաձայնեցված չէին և պարունակում էին հակասական տվյալներ, 5՝ լիովին փոխհամաձայնեցված էին և լրացնում էին միմյանց):




Առարկաների միջև փոխկապակցվածությունը բավարար չէ, առկա են թեմատիկ անհամապատասխանություններ, դժգոհություններն առավել ակնհայտ են մոդուլ 1-ում և մոդուլ 3-ում


5. 1-5 բալային սանդղակով գնահատեք, թե ստորև նշված մոդուլներում տարբեր ամբիոնների կողմից միևնույն թեմայի շուրջ կազմված թեստային հարցերը և դրանց ճիշտ պատասխանները որքանով էին համընկնում միմյանց (1՝ բացարձակ չէին համընկնում և պարունակում էին հակասական տվյալներ, 5՝ լիովին համընկնում էին)





Թեստային հարցերը հաճախ չեն համընկնում և երբեմն պարունակում են հակասություններ

6. Որքանո՞վ եք համաձայն հետևյալ պնդման հետ. Դասընթացի ծրագրով նախատեսված բոլոր թեմաները հնարավոր է խորությամբ ուսումնասիրել հատկացված ժամաքանակի շրջանակում (1՝ բացարձակ համաձայն չեմ, 5՝ լիովին համաձայն եմ)













Նյութը ծավալուն է, իսկ ժամանակը՝ սահմանափակ, ինչը դժվարացնում է լիարժեք յուրացումը, այս դեպքում ևս ուսանողները նշել են ընդհանուր քիմիան

7. 1-5 բալային սանդղակով գնահատեք մոդուլի առարկաների դասախոսությունները (1՝ շատ վատ, 5՝ շատ լավ)













Դասախոսությունները գնահատվում են միջին մակարդակով, առկա են բովանդակային և կազմակերպչական խնդիրներ, առավել խնդրահարույց է մոդուլ1-ը

8. 1-5 բալային սանդղակով գնահատեք մոդուլի առարկաների գործնական պարապմունքները (1՝ շատ վատ, 5՝ շատ լավ)











Գործնական պարապմունքները կարևոր են, սակայն դրանց արդյունավետությունը լիովին բավարար չէ

9. 1-5 բալային սանդղակով գնահատեք ձեր մնացորդային գիտելիքները ներքոնշյալ մոդուլներն ուսումնասիրելուց հետո




Մնացորդային գիտելիքների մակարդակը միջին մակարդակի է, ինչը պայմանավորված է ծանրաբեռնվածությամբ:


10.Գնահատեք քննական հարցերի բաշխվածության համաչափությունը. արդյո՞ք առավել շատ դասաժամեր ունեցող առարկաները քննական թեստում ունեին համապատասխանաբար ավելի մեծ տեսակարար կշիռ





Քննական հարցերի բաշվխածությունը միշտ չէ, որ համաչափ է հատկացված դասաժամերին

11.Միջինում շաբաթական քանի՞ ժամ եք ծախսել այս դասընթացի ինքնուրույն աշխատանքների և պատրաստվելու համար (բացի դասախոսություններն ու գործնական պարապմունքները)










Ուսանողները ծախսում են զգալի ժամանակ, ինչը վկայում է բարձր ծանրաբեռնվածության մասին:

12. Ըստ Ձեզ, ատեստավորման ընթացքում ստացած գնահատականը արտացոլում է Ձեր իրական գիտելիքները



Գնահատականները միշտ չէ, որ լիարժեք արտացոլում են իրական գիտելիքները

Ընդհանուր եզրակացություն

Մոդուլային կրթական համակարգը ունի կառուցվածքային խնդիրներ՝ բարձր ծանրաբեռնվածություն, առարկաների միջև անհամակարգվածություն, ժամանակի անհամաչափ բաշխում և գնահատման ոչ լիարժեք արդյունավետություն: Առաջարկվում է վերանայել ծրագրի կառուցվածքը, նվազեցնել ծանրաբեռնվածությունը և բարձրացնել ուսուցման համակարգվածությունը

Ինչը և ինչպես կփոխեիք մոդուլային ձևաչափով կրթությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով

1. Կթեթևացնեի դասերի քանակը, որովհետև շատ դժվար է այդքան առարկա համատեղ անցնել
2. Ցանկալի է սկզբում նյութն ուսումնասիրել անատոմիայով, ապա նոր ֆիզիոլոգիա և հիստոլոգիայով
3. Միանգամից շատ առարկաներ ուսումնասիրելը կարճ ժամանակահատվածում, կարծում եմ, այդքան էլ արդյունավետ չի
4. Մտածում եմ որ առարկաների քանակը այնքան շատ էր, որ քննական շրջանում հնարավոր չէր լիարժեք պատրաստվել բոլորին, ինչպես նաև շաբաթվա ծանրաբեռնվածությունը չափից շատ է
5. Դասաժամերը քիչ են, իսկ նյութերը ծավալուն, որոշ մոդուլներին շատ քիչ ժամանակ է տրվում և մենք չենք հասցնում լիովին ուսումնասիրել, հասկանալ և լավ փակել մոդուլը, կան առարկաներ ոչ մասնագիտական, որոնք ժամանակ են խլում մեզանից, իսկ դասախոսները պահանջկոտ են, խնդրում եմ ոչ մասնագիտական առարկաների պահանջները մեղմել, մասնավորապես ֆիզիկա առարկայի պահանջները
6. Ավելի սինխրոն կդարձնեի մոդուլ 3,4-ի առարկաների թեմաները: Որ 3-ն էլ նույն թեմաները անցնեինք… ու հիստոլոգիայի քսերոքսում նկարներ կավելացնեի. ամեն դասին անհրաժեշտ նկարը: Բացի դա մկանի դասին մի քիչ ավել ժամանակ կտայի(առհասարակ մոդուլ 3-ի հիստոլոգիային (բավականին բարդ էր))
7. Լեզուները մոդուլի տակից հանեք,անիմաստ է
8. Տրամադրել բժշկական քիմիայի համար ավելի շատ դասաժամեր, հատկապես ընդհանուր քիմիայի համար:

9. Ամեն առարկայի պարտադիր 1 միավոր հավաքելը անիմաստ է, եթե մտնում է մոդուլի մեջ: Յուրաքանչյուր մոդուլի 1 հավաքել պարտադիր լինելը ավելի արդյունավետ տարբերակ է
10. Մոդուլի տևողությունը (ավելի երկարատև)
11. Կարծում եմ, կարելի է ժամամակ առ ժամանակ կատարել ժողովներ ուսանողների հետ և քննարկել մոդուլային համակարգը բարելավելու ուղիները
12. Սիստեմը ստիպում է ուսանողին գիտելիքի փոխարեն գնահատականի վրա կենտրոնանալ: Վերացրե'ք այն՝ թողնելով միայն կիսամյակային քննությունները:
13. Ավելի շատ ժամեր կհատկացնեի բարդ ու մեծ ծավալով առարկաներին,բացի այդ, ըստ իս, լեկցիան ամենաանիմաստ բանն է երբևէ. Կարելի է դա փոխարինել ավելի բժշկական մտածողություն զարգացնող ժամերով, օրինակ ֆիզիոլոգա առարկայից: Նախօրոք ասվի քննարկվող թեման, կազմվի քուիզ հոսքի համար: Իսկ ակտիվությանը տարեկան կտրվածքով բոնուս տրվի, որը կմիանա ամբիոնական միավորին կամ թեկուզ քննությանը
14. Օրինակ, նույն մոդուլում գտնվող առարկաներից ֆիզիոլոգիան լավ պատկերացնելու համար պետք է դրան համապատասխան անատոմիան իմանալ , անատոմիայի նյութն անցնենք ավելի շուտ
15. Տեղափոխված ստոմատոլոգիայի ուսումնական ծրագրի շրջանակներում առաջարկում եմ վերանայել առարկայական բաշխումը և ֆիզիկա առարկան հանել պարտադիր դասընթացների ցանկից: Առաջարկի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ ֆիզիկայի հիմնական բաժինները արդեն իսկ ուսումնասիրվել են նախորդ կրթական փուլերում, և դրանց կրկնակի ընդգրկումը տվյալ ծրագրում չի ապահովում էական նոր գիտելիք կամ մասնագիտական հմտություն: Փոխարենը, դա ավելացնում է ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ առանց համապատասխան արդյունավետության: Հաշվի առնելով ստոմատոլոգիայի մասնագիտական ուղղվածությունը՝ առավել նպատակահարմար կլինի ուսումնական ժամանակը և ռեսուրսները կենտրոնացնել մասնագիտությանը անմիջականորեն առնչվող առարկաների վրա, ինչպիսիք են կլինիկական, կենսաբժշկական և պրակտիկ հմտությունների զարգացումը ապահովող դասընթացները: Ուստի խնդրում եմ քննարկել և հնարավորության դեպքում հաստատել ֆիզիկա առարկայի հանումը տվյալ ուսումնական ծրագրից՝ ծրագրի արդյունավետությունն ու նպատակահարմարությունը բարձրացնելու նպատակով:
16. Ամենալավը 4-րդ մոդուլն էր, քանի որ 3 առարկայով էլ նույն թեման էինք անցնում միաժամանակ: Կցանկանայի, որ մնացածն էլ այդպես լիներ:
17. Ժամանակահատված քիչ է հատկացված և ավարտելուն պես մոդուլի առարկաների հարցումները քիչ օրային ինտերվալով են դասակարգված, ժամանակը քիչ է չհասցրածը յուրացնելու և կրկնելու համար,
18. Դասերի քանակը կնոսրացնեի, որպեսզի դասերը լավ յուրացվեն, այլ ոչ թե ուղղակի անգիր արվի , ֆիզկուլտուրայի դասերը կսարքեի ընտրովի, որովհետև շաբաթը մեկ անգամ ակտիվությունը 1 ժամով ոչ մի օգուտ չի տա
19. Վերանայել մոդուլի դասընթացների թեմաները
20. 2րդ կուրսի առարկաները 1ին կուրսում բավականին բարդ է և դժվար
21. Առարկաներ կային, որոնք կհանեի, որովհետև խառնաշփոթը առաջին կուրսեցու համար շատ է լինում, ու հիմնական գիտելիքներ չեն մնում
22. Քննությունների քանակը շատ է
23. Մոդուլային համակարգում յուրաքանչյուր առարկայի համար 1 միավոր հավաքելը սխալ է, մոդուլի համար մինիմալ 1 հավաքելը պարտադիր ավելի լավ և խելացի է

Խնդրում ենք մանրամասնել որ առարկաների միջև կային անհամաձայնություններ (նշեք օրինակներ)

1. Որոշ թվային տվյալներ առարկաներում տարբեր էին

2. Քիմիա- նշել են մի քանի ուսանողներ
3. Ես անցած կիսամյակից դժգոհ չեմ, մի քիչ բարդ էր ու ծանրաբեռնված… բայց էս կիսամյակ ԱՀԱՎՈՐԱ, Նախ անատոմիան հիստոլոգիայի ու ֆիզիոլոգիայի հետ չի բռնում, որովհետև հիմա մենք ֆիզիոլոգիայից անցնում ենք սիրտ, բայց ֆիզիոլոգիայից գործունեություն ենք անցնում առանց կառուցվածքի մասին իմանալու…
4. Դասախոսությունները գործնական դասերից առաջ անցնենք։Քանի որ հաճախ այդպես չի լինում
5. Մոդուլ 3ում անատոմիայից անցնում էինք ոսկրաբանություն, հոդաբանություն, մկաններ Հյուսվածաբանությունից հյուսվածքներ: ֆիզիոլոգիայից արյուն և դրդունակ հյուսվածք: Այս թեմաները իրար հետ ընդհանրապես փոխհամաձայնեցված չեն: Իսկ ինչը վերաբերվում է 4րդ մոդուլին, ճիշտ է, 3 առարկայից էլ անցել ենք մարսողություն ու արտազատություն, բայց հիստոլոգիայից ու ֆիզիոլոգիայից անցել վերջացրել ենք մարսողությունը, նոր անատոմիան սկսել: Իրականում ցանկալի կլիներ սկզբից սովորել դրանց անատոմիական կառուցվածքը, նոր հիստոլոգիան ու ֆիզիոլոգիան: Առանց օրգանի անատոմիական կառուցվածքը իմանալու հիստոլոգիա ու ֆիզիոլոգիա յուրացնելը շատ դժվար է:
6. Քիմիաների, իսկ 2 մոդուլի միայն սկիզբն էր համաձայնեցված
7. Հյուսվածաբանություն և կենսաբանություն
8. Մոդուլ 2, կենսաբանության և հյուսվածաբանության միջև: Մոդուլ 4, անատոմիայի, ֆիզիոլոգիայի և հյուսվածաբանության միջև:
9. Հյուսվածաբանություն և կենսաբանություն, դեղնուցապարկից ինչեր են առաջանում
10. Կենսաբանության ու հիստոլոգիայի մոդուլի, քանզի նմանատիպ էին դասերից հարցերը և անգամ բողոքարկմանը չէիր հասկանում, որ առարկայի հարցն է, իսկ քիմիան կարծում եմ, որ կարելի էր երկու քիմիաներից հավասարաչափ հարցեր ընգրկել :
11. Կենսաբանություն, հիստոլոգիա՝ ձվաբջջի եզակին հոգնակին: Քիմիան գրքում ասումա կոմպլեքսի լիգանդները այբբենականով կարդա, քննությանը ռանդոմով ճիշտա տալի:
12. Մոդուլ 3ը մի փոքր խառը ստացվեց ի տարբերություն 4րդի Գանգ+ բուն հիստոլոգիա+ ֆիզիոլոգա արյուն,դրդունակ Ամենաբարդ թեմաների ոչ մոդուլային համադրում էր
13. Հիմնականում թվերի տարբերություններ կայն, որոնք կարող էին քննության ժամանակ շփոթություն առաջացնել
14. Միայն 4րդ մոդուլի առարկաներն են եղել իրար հետ կապակցված
15. Ֆիզիոլգիա- հյուսվածաբանության մեջ թվերի տարբերություններ
16. Անատոմիա -ֆիզիոլոգիա -հյուսվածաբանություն
17. Լեկցիաները չեն համընկնում դասերի հետ, թեման անցնում ենք, հետո լեկցիան
18. Մոդուլ 2